Կարգապահական գործ թիվ ԿԳ-15115

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի փետրվարի 09-ի թիվ 20-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/17-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՐԻՆԵ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալա**տ) խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Նարինե Բեգլարյանին (արտոնագիր թիվ՝ 1572) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Արմինե Հարությունյանը 07.07.2015թ. դիմում (**այսուհետ՝ Դիմում**) է ներկայացրել Պալատ հայտնելով, որ թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործով 30.06.2015թ. փաստաբան Նարինե Բեգլարյանն իր վստահորդին՝ Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիին ուղարկել է գրություն, որով խնդրել է վերջինիս համաձայնությունը՝ 30.06.2015թ. հետո իր դրամական միջոցների վերաբերյալ տեղեկություններ ստանալու վերաբերյալ:

Արմինե Հարությունյանը դիմումին կցել է Նարինե Բեգլարյանի գրությունն ուղղված իր վստահորդ՝ Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիին:

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Նարինե Բեգլարյանի գործողություններում առկա են փաստաբանի վարքագծքի կանոնագրքի 5.3. կետի խախտման առերևույթ հատկանիշներ, քանի որ վերջինս առանց իր գիտության և առավել ևս առանց իր համաձայնության ուղղակի հաղորդակցության մեջ է մտել վստահորդի հետ՝ թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում տեղեկատվություն ստանալու համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

Ըստ Դիմողի՝ փաստաբանը պետք է հրաժարվեր, այսինքն՝ չպետք է անմիջական շփման մեջ մտներ իր վստահորդի հետ՝ տեղյակ լինելով, որ վերջինս ունի փաստաբան: Դիմողի կարծիքով Նարինե Բեգլարյանը խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետը և այդ հիմքով խնդրել է վերջինիս նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 241-Ա/ԿԳ15115 որոշմամբ 22.07.2015թ. կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Նարինե Բեգլարյանի նկատմամբ՝Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետերի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 11.09.2015թ. հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Մարիամ Ղուլյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը հայտնել է, որ թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործով փաստաբան Նարինե Բեգլարյանը հանդիսանում է պատասխանող Անահիտ Սարգսյանի ներկայացուցիչը (հիմք՝ Անահիտ Սարգսյանի կողմից 16.06.2015թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր):

Նույն քաղաքացիական գործով հայցվոր՝ Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիի շահերը ներկայացրել է ինքը՝ Արմինե Հարությունյանը (հիմք՝ Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիի կողմից 16.06.2015թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր):

Փաստաբան Նարինե Բեգլարյանը նշված գործի շրջանակներում Դիմողի վստահորդ՝ Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիին գրություն է ուղարկել 30.06.2015թ.՝ խնդրելով տալ իրհամաձայնությունը՝ 03.08.2011թ. վեր վերջինիս դրամական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Դիմողի կարծիքով Պատասխանողը խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետը:

3.2. Պատասխանողի բացատրությունները.

Պատասխանողն առարկելով Դիմումի դեմ, հայտնել է, որ ըստ իր մեկնաբանման Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետի համաձայն՝ փաստաբանի կողմից վարքագծի կանոնագրքի խախտում է հանդիսանում շփումը հակառակ կողմի հետ, եթե այն եղել է անմիջական և եթե այդ ընթացքում տեղի է ունեցել տեղեկատվության փոխանակում:

Պատասխանողը հայտնել է, որ հակառակ կողմին գրություն ուղարկելը չի հանդիսանում Կանոնագրքի 5.3 կետի խախտում, քանի որ նամակագրությունը չի հանդիսանում անմիջական շփում և հատկապես, եթե նամակագրության միջոցով չի իրականացվում անմիջական տեղեկատվության փոխանակում:

Նարինե Բեգլարյանն ընդունել է իր կողմից Արմինե Հարությունյանի վստահորդին նամակ ուղարկելու փաստը, սակայն իր առարկություններով հայտնել է, որ նամակագրությունը չի կարող նույնանալ անմիջական տեղեկությունների փոխանակման ինստիտուտի հետ, առավել ևս, որ նա իր դիմումով հակառակ կողմից չի խնդրել տրամադրել տեղեկատվություն, այլ ակնկալել է ընդամենը ստանալ վերջինիս համաձայնությունը:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին

Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, Մարիամ Ղուլյանը 28.09.2015թ. կազմել է եզրակացություն (**այսուհետ՝ Եզրակացություն**): Կարգապահական գործում առկա ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում վերջինս նշել է, որ տվյալ կարգապահական գործը հարուցվել է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 5.3 ենթակետի խախտման հատկանիշներով, որի համաձայն՝ Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության (ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ:

Սույն կարգապահական գործի համար էական է հետևյալ հանգամանքների պարզումը.

-արդյոք փաստաբանն անմիջական շփում է ունեցել հակառակորդ կողմի հետ

-արդյոք հակառակորդ կողմն ունի փաստաբան,

-արդյոք փոխանակվել է տեղեկություն և փոխանակված տեղեկությունը կապված է դատական գործի կամ խնդրի հետ,

-արդյոք առկա եղել է հակառակորդ կողմի փաստաբանի համաձայնությունը,

- արդյոք չի գործում որպես բացառություն սահմանված պայմանը:

Ա. Արդյոք փաստաբանն անմիջական շփում է ունեցել հակառակորդ կողմի հետ:

Նախապատրաստողին կարգապահական գործի շրջանակներում ներկայացվել է գրություն, որից ակնհայտ է, որ փաստաբան Նարինե Բեգլարյանը դիմել է հակառակորդ կողմին՝ խնդրելով տալ համաձայնություն ՀՀ բանկերին Անահիտ Սարգսյանին տրամադրել որոշակի տեղեկատվություն:

Նախապատրաստողը հաստատված է համարում փաստը, որ Պատասխանողը շփում ունեցել է Դիմողի վստահորդի հետ:

Բ. Արդյոք հակառակորդ կողմն ունի փաստաբան,

Այս հանգամանքն ընդունել են երկու կողմերը:

Գ. Արդյոք փոխանակվել է տեղեկություն և այդ տեղեկությունը կապված է դատական գործի կամ խնդրի հետ.

Սույն գործով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ Կարգապահական վարույթ հարուցելու մասին 22.07.2015թ. որոշմամբ Կանոնագրքի 5.3 ենթակետի կապակցությամբ տրվել է հետևյալ պարզաբանումը.

Կանոնի նպատակը- Կանոնի հիմնական նպատակը փաստաբանների շահերը պաշտպանելն է և փաստաբանների դերի ու նշանակության բարձրացումը:

Կանոնի երկրորդական նպատակը վստահորդին պաշտպանելն է մյուս կողմի փաստաբանի գործողություններից, հաշվի առնելով այն, որ իրավագիտակցության ոչ բարձր մակարդակ ունեցող վստահորդը կարող է խոցելի լինել առանց իր փաստաբանի մասնակցության:

Շփում հասկացությունը- Այս կանոնը նպատակ չի հետապնդում առհասարակ բացառել փաստաբանի շփումը հակառակորդ կողմի հետ, ինչը նաև քաղաքավարության տարրական կանոնների մեջ չի ներառվում: Օրինակ, եթե դատական նիստին կողմը եկել է ավելի շուտ, քան իր փաստաբանը, ապա դա դեռ չի նշանակում, որ հակառակորդ կողմի փաստաբանն իրավունք չունի ողջունելու կողմին կամ հարցնելու վերջինս ինչպես է իրեն զգում:

«Խնդիր» եզրույթի մեկնաբանությունը- Կանոնագրքի 5.3 ենթակետը սահմանում է, որ փաստաբանը չպետք է որևէ գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ.... այս նախադասության մեջ «խնդիր» բառը ակնկալվում է, որ ի սկզբանե ունեցել է «իրավական բնույթի խնդիր» իմաստը, քանի որ հակառակ պարագայում փաստաբանը և հակառակորդ կողմի վստահորդն անգամ եղանակից կամ մեքենայի կայանման վայրից խոսելու դեպքում անմիջական տեղեկություն կփոխանակեն որևէ խնդրի վերաբերյալ:

Սույն գործի համատեքստում պետք է պարզել, թե արդյոք փաստաբան Նարինե Բեգլարյանը հակառակորդ կողմի հետ տեղեկատվություն է փոխանակել և արդյոք իրավական բնույթի որևէ հարցի կամ խնդրի հետ է դա կապված: Գրությամբ փաստաբանը հակառակորդ կողմից խնդրել է տալ համաձայնություն որոշակի տեղեկատվության ստացման վերաբերյալ: Պալատի նախագահի որոշմամբ ամրագրվել է, որ կանոնն ունի որոշակի պարզաբանման կարիք, որի իրավասությունն ունի միայն Խորհուրդը:

Դ. Արդյոք առկա եղել է հակառակորդ կողմի փաստաբանի համաձայնությունը:

Արմինե Հարությունյանը նշել է, որ իր համաձայնությունը չի եղել: Փաստաբան Նարինե Բեգլարյանը չի առարկել այդ հանգամանքի դեմ:

Ե. Արդյոք չի գործում որպես բացառություն սահմանված պայմանը:

Գրությունը վկայում է, որ այն նախաձեռնվել է Նարինե Բեգլարյանի կողմից, ուղղված է Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթիին: Հետևաբար որպես բացառություն սահմանված պայմանը չի գործում:

Հիմք ընդունելով Կանոնագրքի հավելվածը հանդիսացող կարգապահական վարույթի իրականացման կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և

գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, սույն եզրակացությունը ներկայացվում է Պալատի խորհրդին:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

2015 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԿԳ-15115 կարգապահական գործը և նախապատրաստողի եզրակացությունը հանձնվել է պալատի Խորհրդին:

Կարգապահական գործը վարույթ ընդունելու և նիստ նշանակելու մասին 08.10.2015թ. որոշմամբ թիվ ԿԳ-15115 կարգապահական գործը վարույթ է ընդունվել և նիստի օր է նշանակվել 18.11.2015թ. ժամը 19.15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ), որը 12.11.2015թ. որոշմամբ հետաձգվել: Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 24.11.2015թ. ժամը 19:15-ին, 14.12.2015թ. ժամը 19:15-ին և 09.02.2016թ. ժամը 19:15-ին:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող <<Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի>> 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ Կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործով փաստաբան Նարինե Բեգլարյանը հանդիսացել է պատասխանող Անահիտ Սարգսյանի լիազոր ներկայացուցիչը:
- Թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործով փաստաբան Արմինե Հարությունյանը հանդիսացել է Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիի լիազոր ներկայացուցիչը:
- Թիվ ԵԿԴ 1304/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում փաստաբան Նարինե Բեգլարյանը 30.06.2015թ. փաստաբան Արմինե Հարությունյանի վստահորդ Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիին ուղարկել է գրություն, ակնկալելով ստանալ նրա համաձայնությունը՝ որպեսզի ՀՀ բանկերն Անահիտ Սարգսյանին տրամադրեն տեղեկատվություն՝ 03.08.2011թ. հետո ՀՀ բանկերում Վանանդ Անդրեասյան Ազարարգիթիի դրամական միջոցների ներդրված լինելու և բոլոր բացված հաշիվների վերաբերյալ:

Նշված փաստերը հաստատվել են կողմերի բացատրություններով և այլ ապացույցներով, այդ թվում՝ 16.06.2015թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի, Նարինե Բեգլարյանի 30.06.2015թ. դիմումի պատճեններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 23.11.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան (արտոնագիր թիվ 1572, տրված՝ 05.10.2012թ.) նկատմամբ 2012-2015թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթներ չեն հարուցվել :

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նարինե Բեգլարյանի նկատմամբ հարուցված սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 5.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության (ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ:*

Պալատի նախագահի 22.07.2015թ. որոշմամբ արձանագրվել է, որ Կանոնագրքի 5.3 ենթակետն ունի պարզաբանման կարիք, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնի նպատակը - Կանոնի հիմնական նպատակը փաստաբանների շահերը պաշտպանելն է և փաստաբաների դերի ու նշանակության բարձրացումը:

Կանոնի երկրորդական նպատակը վստահորդին պաշտպանելն է մյուս կողմի փաստաբանի գործողություններից, հաշվի առնելով այն, որ իրավագիտակցության ոչ բարձր մակարդակ ունեցող վստահորդը կարող է խոցելի լինել առանց իր փաստաբանի մասնակցության:

Շփում հասկացությունը - Այս կանոնը նպատակ չի հետապնդում առհասարակ բացառել փաստաբանի շփումը հակառակորդ կողմի հետ, ինչը նաև քաղաքավարության տարրական կանոնների մեջ չի ներառվում: Օրինակ, եթե դատական նիստին կողմը եկել է ավելի շուտ, քան իր փաստաբանը, ապա դա դեռ չի նշանակում, որ հակառակորդ կողմի փաստաբանն իրավունք չունի ողջունելու կողմին կամ հարցնելու վերջինս ինչպես է իրեն զգում:

«Խնդիր» եզրույթի մեկնաբանությունը - Կանոնագրքի 5.3 ենթակետը սահմանում է, որ փաստաբանը չպետք է որևէ գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ.... այս նախադասության մեջ «խնդիր» բառը ակնկալվում է, որ ի սկզբանե ունեցել է «իրավական բնույթի խնդիր» իմաստը, քանի որ հակառակ պարագայում փաստաբանը և հակառակորդ կողմի վստահորդը անգամ եղանակից կամ մեքենայի կայանման վայրից խոսելու դեպքում անմիջական տեղեկություն կփոխանակեն որևէ խնդրի վերաբերյալ:

Պալատի խորհուրդը կարևորելով բարձրացված իրավական հարցադրումները ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը՝

ա) Կանոնագրքի 5.3 ենթակետով նախատեսված վարքագծի կանոնի (**այսուհետ՝ Կանոն**) **հիմնական նպատակը** փաստաբանների շահերը պաշտպանելն է և փաստաբաների դերի ու նշանակության բարձրացումը:

Հետևաբար, այս կանոնին հետևելով, փաստաբանը չպետք է շրջանցի մյուս կողմի փաստաբանին և ուղղակի նրա վստահորդի հետ հարաբերություններ հաստատելով չպետք է նսեմացնի մյուս փաստաբանի դերը:

Յուրաքանչյուր գործով Կանոնագրքի 5.3 ենթակետի խախտման հարցը դիտարկելիս, խորհուրդը պետք է հաշվի առնի այդ գործի փաստերը:

բ) Կանոնագրքի 5.3 ենթակետում նշված տեղեկության **անմիջական փոխանակումը** հակառակորդ կողմի փաստաբանի հետ հնարավոր է **միայն բանավոր հաղորդակցության** միջոցով:

Պալատի խորհուրդն այս եզրահանգման է գալիս հաշվի առնելով Կանոնի հիմնական նպատակը: Փաստաբանի կողմից հակառակորդ կողմին ուղղված գրությունը վերջինս կարող է քննարկել իր փաստաբանի հետ և վերջինիս խորհրդի հիման վրա պատասխանել:

Բացի այդ գործնականում կարող են լինել իրավիճակներ, երբ փաստաբանն իր վստահորդի անունից պետք է մյուս կողմին ներկայացնի դիմում կամ պահանջ, այնինչ նրա փաստաբանին դիմում կամ պահանջ ներկայացնելը՝ հաշվի առնելով նաև տվյալ փաստաբանի լիազորությունների ծավալը կամ լիազորությունները հայտնի լինել կամ չլինելու հանգամանքը, կարող են ակնկալվող իրավական հետևանքները չառաջացնել:

գ) Կանոնագրքի 5.3 ենթակետում նշված դատական գործը կամ խնդիրը Պալատի խորհուրդը մեկնաբանում է դրանց բառացի նշանակությամբ: Կանոնում նշված խնդիր ասելով պետք է հասկանալ դատական գործին վերաբերող կամ չվերաբերող ցանկացած իրավական խոհրդատվություն պահանջող հարց:

Տվյալ դեպքում, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նարինե Բեգլարյանը տեղեկությունները անմիջական չի փոխանակել դատավարական հակառակորդ կողմի հետ, հետևաբար Կանոնագրքի 5.3 ենթակետը չի կարող կիրառվել փաստաբանի նկատմամբ:

Համաձայն <Փաստաբանության մասին> ՀՀ օրենքի 39.7 հոդվածի 5-րդ մասի՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությունից հետո պալատի խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը կարգապահական վարույթը կարճելու մասին*:

Իսկ համաձայն նույն օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ բացակայում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքը:*

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով <Փաստաբանության մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության> 16.26-րդ կետի, <Փաստաբանի նկատմամբ կարգապահական

վարույթի իրականացման կարգի> 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 22.07.2015թ. թիվ 241-Ա/ԿԳ15115 որոշմամբ փաստաբան Նարինե Բեգլարյանի (արտոնագիր թիվ 1572) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3. կետի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն</u>. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան